անմիջապէս պատարագէին նոքա զկնի Ցունաց, ուստի ոչ կամեցան խախտել զսովորութիւնս իւրեանց, որոյ վասն եղեն ոչ սակաւ բանք և վէճք 'ի մէջ երից ազգաց, և 'ի վերջոյ յանձն առին Հայք մնալ զկնի պատարագին Լատինաց։ Իսկ վասն խորանի Ծննդեան տեղւոյն սահմանեցին ընդ Ցոյնս այսպէս, Ցունաց՝ զկնի պատարագին իւրեանց բառնալ 'ի խորանէ անտի զպատկերս և զաշտանակս և չըթողուլ ինչ անդ, և դնել զնոյնս Հայոց, Նոյնպէս և Հայոց՝ զկնի պատարագին բառնալ զամենայնն անտի, և մնալ խորանին զտիւ և զգիշեր առանց պատկերի եւ աշտանակի։ Եւ յետ այնորիկ կարգաւորեցին զթերի մնացեալ զիրս 'ի Ս. Աստուածածին հաճութեամբ միմեանց և հանդարտեցան։ Յետ կատարելոյ զգործ բաժանորդութեան Բեթղեհէմի եւ Աստուածածնի՝ մնայր մաքրել զկնճիռն Տաճարին Ս. Յարութեան։

Սակայն Դատաւորն դանդաղէր զայլ և այլս պատճառելով, և Մուվէլլայն ասէր մինչև ոչ արձանագրեսցի հրովարտակն 'ի Դատարանի, ոչ մնանեմ ասէր անդ. Ջուխատարն և Սուրհանդակն Հայոց փութացին դառնալ 'ի Կոստանդինուպոլիս։

ԳԼՈՒԽ ԼԶ.

Կարգաւորութիւն սեփհական իրաւանց Հայոց 'ի Ս. Յարութիւն։ Յափշտակեալ և պակաս շինեալ տեղիքն։ Ազահութիւն այլազգեաց Երուսաղէմի և Դատաւորին։ Խռովութիւն Ցունաց յԱստուածածին։ Բռնութիւն Քաղաքապետին։ Խռովութիւն 'ի Բեթղեհէմ։

ՅԵՏ այսր ամենայնի հազիւ ուրեմն յորդորեցին Հայք զԴատաւորն և զՄուվէլլայն և ժողովեցան 'ի Ս. Յարութիւն (1813. 'ի 1 Դեկտեմբեր). եկին և գլխաւորք Հայոց և Ցունաց։ Եհարց Դատաւորն, զի՞նչ է վէճն ձեր ասա։ Հայք ետուն պատասխանի, ըստ հրովարտակին Սէլիմայ յատկացուցանել մեզ զվերին եւ զստորին կողմն 'ի ներքս մեծի դրան։ Ցոյնք ասեն չունիք անդ իրաւունս՝ զի տե-